

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Զբաղվածություն

Առայսօր աշխատանքի շուկայի վերաբերյալ վիճակագրական ցուցանիշները մշակվել և տարածվել են, գուգահեռաբար՝ վարչական գրանցումների և վիճակագրական հետազոտական աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա, ինչը դժվարություններ է առաջացնում թե՛ վիճակագրական տեղեկատվություն մշակողների և թե՛ տեղեկատվություն սպառողների համար:

Այժմ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ), առաջնորդվելով Արժույթի միջազգային հիմնադրամի և Եվրամիության (այդ թվում՝ Եվրոստատի) փորձագետների կողմից տրված խորհրդատվությամբ, սկսած 2012թ. փետրվարից դադարեցնում է աշխատանքի շուկայի վիճակագրական ցուցանիշների (**զբաղվածություն, գործազրկության մակարդակ, տնտեսապես ակտիվ բնակչություն, տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն, աշխատանքային ռեսուրսներ**) հաշվարկն ըստ վարչական աղբյուրներից ստացվող վիճակագրական տեղեկատվության և հիմնվում է աշխատուժի հետազոտության արդյունքների վրա, որը 2007թ.-ից իրականացվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության շրջանակում: Հետազոտության արդյունքներով հաշվարկված առանցքային ցուցանիշները կիրառարակվեն **եռամսյակային** պարբերականությամբ՝ եռամսյակին հաջորդող եռամսյակի վերջին աշխատանքային օրը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից տրամադրվող վիճակագրական տեղեկատվությունը (աշխատանք փնտրողներ, պաշտոնապես գրանցված գործազուրկներ, թափուր աշխատատեղեր և այլն) կշարունակվի հրապարակվել ամսական պարբերականությամբ:

Զբաղվածության ցուցանիշներն ըստ տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության արդյունքների

2011թ.-ին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտությունն ընդգրկել է ՀՀ բոլոր մարզերը և Երևան քաղաքը: Տվյալները հիմնված են հանրապետության 7872 տնային տնտեսությունների **15-75 տարեկան** անդամների պատասխանների վրա: Դիտարկվող ժամանակաշրջանը եղել է հարցմանը նախորդող վերջին մեկ շաբաթը:

Հետազոտության հիմքում դրված հասկացությունները, ցուցանիշների համախումբը և հաշվարկման մեթոդաբանությունը հիմնականում համապատասխանում են ԱՄԿ (Աշխատանքի միջազգային կազմակերպություն) և (կամ)¹ Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումների և դրույթներին՝ հնարավորինս հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները:

¹ ԱՄԿ-ի և Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումներում առանձին դեպքերում առկա են որոշ տարբերություններ: Սահմանվորապես, պարտադիր ժամկետային զինծառայողներն ըստ ԱՄԿ մեթոդաբանության դասվում են զբաղվածների (տե՛ս ILO, ISCO-88), իսկ ըստ Եվրոստատի (տե՛ս European Commission, The European Union labour force survey, Methods and definitions-2001)՝ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության խմբին: Տվյալ դեպքում ՀՀ ԱՎԾ-ն հիմք է ընդունել վերջինս, որը կիրառվում է Եվրամիության անդամ երկրներում:

Մտորն ներկայացվում են հետազոտությանը արձանագրված որոշ առանցքային ցուցանիշներ ինչպես տարեկան, այնպես էլ՝ **եռամսյակային** կտրվածքով: 2011թ.-ի ցուցանիշները դեռևս նախնական են:

Աշխատանքային ռեսուրսների կազմն ըստ սեռի, քաղաք/գյուղ կտրվածքի, 2010-2011թթ.

	Ընդամենը		Տղամարդ		Կին		Քաղաք		Գյուղ	
	2010թ.	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.	2011թ.
Աշխատանքային ռեսուրսներ, հազ. մարդ	2389.7	2286.3	1075.7	1017.0	1314.0	1269.3	1554.5	1498.3	835.1	788.0
Տնտեսապես ակտիվ բնակչություն	1463.3	1440.9	777.2	739.0	686.1	701.8	869.7	864.3	593.7	576.6
Զբաղվածներ	1185.2	1175.1	644.8	610.9	540.4	564.2	627.7	631.8	557.5	543.3
<i>որից</i> ՝ ունեն երկրորդ աշխատանք	53.2	36.2	28.4	19.8	24.8	16.4	11.4	8.7	41.8	27.5
Գործազուրկներ	278.2	265.7	132.5	128.1	145.7	137.7	242.0	232.5	36.2	33.3
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	926.3	845.4	298.4	278.0	627.9	567.5	684.9	634.0	241.5	211.4
Տնտեսական ակտիվության մակարդակը ¹ , %	61.2	63.0	72.3	72.7	52.2	55.3	55.9	57.7	71.1	73.2
Զբաղվածության մակարդակը ¹ , %	49.6	51.4	59.9	60.1	41.1	44.4	40.4	42.2	66.8	68.9
Գործազրկության մակարդակը ² , %	19.0	18.4	17.0	17.3	21.2	19.6	27.8	26.9	6.1	5.8

	Փոփոխությունը նախորդ տարվա համեմատ (2011/2010), %				
	ընդամենը	տղամարդ	կին	քաղաք	գյուղ
Աշխատանքային ռեսուրսներ	95.7	94.5	96.6	96.4	94.4
Տնտեսապես ակտիվ բնակչություն	98.5	95.1	102.3	99.4	97.1
Զբաղվածներ	99.1	94.7	104.4	100.7	97.5
<i>որից</i> ՝ ունեն երկրորդ աշխատանք	68.0	69.7	66.1	76.3	65.8
Գործազուրկներ	95.5	96.7	94.5	96.1	92.0
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	91.3	93.2	90.4	92.6	87.5
Տնտեսական ակտիվության մակարդակը ¹ , %	102.9	100.6	105.9	103.2	103.0
Զբաղվածության մակարդակը ¹ , %	103.6	100.3	108.0	104.5	103.1
Գործազրկության մակարդակը ² , %	96.8	101.8	92.5	96.8	95.1

Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության տեսակների և սեռի, 2010-2011թթ.

1000 մարդ

	Ընդամենը		Տղամարդ		Կին	
	2010թ.	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.	2011թ.
Ընդամենը	1185.2	1175.1	644.8	610.9	540.4	564.2
Գյուղատնտեսություն	457.4	457.4	202.4	200.5	255.0	256.9
Արդյունաբերություն	120.6	128.7	89.9	93.4	30.7	35.3
Շինարարություն	85.8	67.4	84.6	66.0	1.1	1.3
Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ	128.4	123.9	76.5	67.5	52.0	56.4
Տրանսպորտ և կապ	70.6	65.8	57.1	52.4	13.5	13.4

¹ Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի) թվաքանակի նկատմամբ:

² Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի նկատմամբ:

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Ընդամենը		Տղամարդ		Կին	
Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	43.5	40.7	22.0	23.9	21.5	16.8
Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում	235.0	242.8	89.4	83.5	145.6	159.2
Այլ ծառայություններ	43.9	48.5	22.9	23.8	21.0	24.7

Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության տեսակների և գյուղ/քաղաք կտրվածքի, 2010-2011թթ.

	Քաղաք		Գյուղ	
	2010թ.	2011թ.	2010թ.	2011թ.
Ընդամենը	627.7	631.8	557.5	543.3
Գյուղատնտեսություն	50.0	48.8	407.5	408.6
Արդյունաբերություն	98.8	108.0	21.8	20.6
Շինարարություն	63.1	47.3	22.7	20.1
Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ	110.2	107.8	18.2	16.1
Տրանսպորտ և կապ	59.7	57.5	10.9	8.4
Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	37.2	37.9	6.2	2.8
Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում	170.3	180.3	64.7	62.5
Այլ ծառայություններ	38.4	44.3	5.5	4.2


Աշխատանքային ռեսուրսների կազմն ըստ սեռի, 2011թ. եռամսյակներ

	Ընդամենը				Տղամարդ				Կին			
	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
Աշխատանքային ռեսուրսներ, հազ. մարդ	2360.0	2329.6	2240.5	2214.7	1086.2	1034.8	964.6	982.6	1273.8	1294.7	1275.9	1232.1
Տնտեսապես ակտիվ բնակչություն	1456.0	1491.8	1476.6	1337.8	760.2	771.5	730.1	693.9	695.8	720.3	746.5	643.9
Զբաղվածներ	1154.2	1205.3	1222.8	1116.9	605.3	623.0	623.9	591.1	549.0	582.3	598.9	525.8
<i>որից</i> ՝ ունեն երկրորդ աշխատանք	37.9	43.9	40.6	22.1	18.7	27.8	22.0	10.6	19.2	16.1	18.6	11.5
Գործազուրկներ	301.8	286.4	253.8	220.9	154.9	148.5	106.2	102.9	146.9	138.0	147.6	118.1
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	903.9	837.8	763.9	876.9	325.9	263.4	234.5	288.7	578.0	574.4	529.4	588.2
Տնտեսական ակտիվության մակարդակը ¹ , %	61.7	64.0	65.9	60.4	70.0	74.6	75.7	70.6	54.6	55.6	58.5	52.3
Զբաղվածության մակարդակը ¹ , %	48.9	51.7	54.6	50.4	55.7	60.2	64.7	60.2	43.1	45.0	46.9	42.7
Գործազրկության մակարդակը ² , %	20.7	19.2	17.2	16.5	20.4	19.2	14.5	14.8	21.1	19.2	19.8	18.3


¹ Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի) թվաքանակի նկատմամբ:

² Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի նկատմամբ:

Գործազրկության մակարդակի փոփոխությունը, 2010-2011թթ. եռամսյակներ



Գործազրկության մակարդակի ըստ 2010-2011թթ. եռամսյակների




Աշխատանքային ռեսուրսների կազմի ըստ գյուղ/քաղաք կտրվածքի, 2011թ. եռամսյակներ

	Քաղաք				Գյուղ			
	I	II	III	IV	I	II	III	IV
Աշխատանքային ռեսուրսներ, հազ. մարդ	1545.7	1514.2	1469.3	1464.0	814.2	815.4	771.2	750.8
Տնտեսապես ակտիվ բնակչություն	889.4	875.5	884.6	807.7	566.6	616.3	592.0	530.2
Զբաղվածներ	635.1	611.8	655.6	624.7	519.1	593.5	567.2	492.2
որից՝ ունեն երկրորդ աշխատանք	10.0	9.4	12.9	2.6	28.0	34.5	27.8	19.5
Գործազուրկներ	254.3	263.7	229.8	182.9	47.5	22.8	24.8	38.0
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	656.3	638.7	584.7	656.3	247.7	199.1	179.2	220.6
Տնտեսական ակտիվության մակարդակը ¹ , %	57.5	57.8	60.2	55.2	69.6	75.6	76.8	70.6
Զբաղվածության մակարդակը ¹ , %	41.1	40.4	44.6	42.7	63.7	72.8	73.5	65.6
Գործազրկության մակարդակը ² , %	28.6	30.1	25.9	22.7	8.4	3.7	4.2	7.2

¹ Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների նկատմամբ:

² Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ:

Զբաղվածության և գործազրկության աճի տեմպն ըստ եռամսյակների



Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության տեսակների և սեռի, 2011թ. եռամսյակներ

1000 մարդ

	Ընդամենը		Տղամարդ		Կին	
	I	II	I	II	I	II
Ընդամենը	1154.2	1205.3	605.3	623.0	549.0	582.3
Գյուղատնտեսություն	443.7	517.9	202.3	232.9	241.4	284.9
Արդյունաբերություն	136.0	135.1	91.8	100.1	44.2	35.0
Շինարարություն	53.4	66.4	52.1	65.5	1.3	0.9
Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ	125.1	115.8	71.2	55.4	53.9	60.3
Տրանսպորտ և կապ	61.2	58.4	53.8	43.9	7.4	14.5
Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	44.5	26.4	28.6	13.9	15.9	12.6
Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում	239.8	236.3	78.6	85.9	161.2	150.4
Այլ ծառայություններ	50.5	49.0	26.8	25.3	23.7	23.7
	Ընդամենը		Տղամարդ		Կին	
	III	IV	III	IV	III	IV
Ընդամենը	1222.8	1116.9	623.9	591.1	598.9	525.8
Գյուղատնտեսություն	496.5	371.6	210.5	156.4	286.1	215.2
Արդյունաբերություն	125.7	117.9	93.4	88.0	32.3	29.9
Շինարարություն	76.1	73.0	74.0	72.0	2.1	0.9
Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ	126.1	128.5	72.7	70.7	53.5	57.8
Տրանսպորտ և կապ	74.3	69.5	56.1	55.8	18.2	13.7
Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	40.1	51.9	21.7	31.4	18.3	20.5
Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում	231.3	262.9	73.3	96.1	158.0	166.8
Այլ ծառայություններ	52.7	41.8	22.2	20.8	30.4	21.0

Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության տեսակների և գյուղ/քաղաք կտրվածքի, 2011թ. եռամսյակներ

1000 մարդ

	Քաղաք				Գյուղ			
	I	II	III	IV	I	II	III	IV
Ընդամենը	635.1	611.8	655.6	624.7	519.1	593.5	567.2	492.2
Գյուղատնտեսություն	46.0	58.7	53.7	36.8	397.7	459.1	442.8	334.7
Արդյունաբերություն	114.3	111.6	110.7	95.5	21.7	23.5	15.0	22.3
Շինարարություն	43.7	46.9	60.3	38.3	9.7	19.5	15.8	34.7
Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ	106.4	103.7	109.6	111.6	18.7	12.1	16.6	16.8
Տրանսպորտ և կապ	54.4	51.7	64.5	59.2	6.8	6.7	9.8	10.2
Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	40.0	25.4	36.7	49.5	4.5	1.1	3.4	2.4
Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում	184.7	165.7	172.8	197.9	55.1	70.7	58.5	65.0
Այլ ծառայություններ	45.6	48.2	47.4	35.9	4.9	0.8	5.3	5.9

1.4.1.1. Գործազրկության ցուցանիշներն ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալների

Աշխատուժի առաջարկն ըստ ամիսների, 2012թ.

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ		նրանցից՝ չգրաղվածներ		որոնցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2011թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2011թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2011թ. նույն ամսվա նկատմամբ, %
Հունվար	80.3	86.6	69.3	87.1	67.5	86.5
Փետրվար	79.9	86.3	68.4	86.9	66.6	86.3

Կին աշխատուժի առաջարկն ըստ ամիսների, 2012թ.

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրող կանայք		նրանցից՝ չգրաղվածներ		որոնցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2011թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2011թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2011թ. նույն ամսվա նկատմամբ, %
Հունվար	54.3	89.2	48.9	87.9	47.8	87.5
Փետրվար	53.9	88.9	48.3	88.1	47.2	87.6


Աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2012թ. փետրվարի վերջի դրությամբ

հազ. մարդ

	Աշխատանք փնտրողներ			նրանցից՝ չգրաղվածներ			որոնցից՝ գործազուրկներ		
	ընդամենը	նրանցից՝ երիտասարդներ, տարեկան		ընդամենը	նրանցից՝ երիտասարդներ, տարեկան		ընդամենը	նրանցից՝ երիտասարդներ, տարեկան	
		16-24	25-30		16-24	25-30		16-24	25-30
Ընդամենը	79.9	7.5	11.3	68.4	5.6	9.2	66.6	5.5	9.0
ք. Երևան	24.4	1.4	2.8	22.4	1.2	2.5	22.1	1.1	2.4
Արագածոտն	2.4	0.4	0.4	1.4	0.2	0.2	1.4	0.2	0.2
Արարատ	3.8	0.4	0.6	2.9	0.2	0.4	2.9	0.2	0.4
Արմավիր	3.4	0.3	0.5	2.7	0.2	0.3	2.6	0.2	0.3
Գեղարքունիք	6.4	0.5	1.0	4.7	0.3	0.7	4.6	0.3	0.7
Լոռի	11.6	1.5	1.9	10.4	1.2	1.7	10.2	1.2	1.7

	Աշխատանք փնտրողներ			նրանցից՝ չգրադավաններ			որոնցից՝ գործազուրկներ		
	ընդամենը	նրանցից՝ երիտասարդներ, տարեկան		ընդամենը	նրանցից՝ երիտասարդներ, տարեկան		ընդամենը	նրանցից՝ երիտասարդներ, տարեկան	
		16-24	25-30		16-24	25-30		16-24	25-30
Կոտայք	6.9	0.6	1.0	6.1	0.4	0.9	5.9	0.4	0.8
Շիրակ	9.2	1.1	1.3	8.2	0.9	1.1	7.7	0.8	1.1
Սյունիք	6.0	0.5	0.9	4.7	0.4	0.7	4.5	0.3	0.6
Վայոց ձոր	1.2	0.2	0.2	0.8	0.1	0.1	0.8	0.1	0.1
Տավուշ	4.6	0.6	0.7	4.0	0.5	0.6	4.0	0.5	0.6

Պաշտոնապես գրանցված գործազրկության աճի տեմպն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2012թ. փետրվարի վերջի դրությամբ



Աշխատուժի առաջարկն¹ ըստ ՀՀ մարզերի, տարածաշրջանների և ք.Երևանի, 2012թ. փետրվարի վերջի դրությամբ

մարդ

	Աշխատանք փնտրողներ	նրանցից՝ գործազուրկներ		Աշխատանք փնտրողներ	նրանցից՝ գործազուրկներ
Ընդամենը	79850	66638			
ք. Երևան	24447	22054	Լոռի	11594	10242
Աջափնյակ	2965	2533	Թումանյան	1225	1008
Ավան	999	920	Սպիտակ	1595	1192
Արաբկիր	1869	1682	Ստեփանավան	2719	2384
Դավթաշեն	1689	1608	Տաշիր	349	299
Էրեբունի	3825	3408	ք. Վանաձոր	5706	5359
Կենտրոն	2095	1875	Կոտայք	6876	5923
Մալաթիա-Սեբաստիա	3230	2995	Աբովյան	2413	2103
Նոր Նորք	2244	2021	Հրազդան	3593	3102
Շենգավիթ	3811	3436	Նաիրի	870	718
Քանաքեռ-Զեյթուն	1720	1576	Շիրակ	9226	7659
Արագածոտն	2369	1386	Ամասիա	81	65
Աշտարակ	1268	1036	Անի	503	303
Ապարան	163	113	Աշոցք	320	175
Արագած	479	134	Արթիկ	721	521
Թալին	459	103	ք. Գյումրի	7601	6595
Արարատ	3787	2859	Սյունիք	6018	4522
Արարատ	1652	1161	Գորիս	2275	1788
Արտաշատ	1033	862	Կապան	1753	1397
Մասիս	1102	836	Մեղրի	612	378
Արմավիր	3364	2642	Միսիան	1378	959

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Չգրադավանության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

	Աշխատանք փնտրողներ	նրանցից՝ գործազուրկներ		Աշխատանք փնտրողներ	նրանցից՝ գործազուրկներ
Արմավիր	1214	1054	Վայոց ձոր	1218	799
Բաղրամյան	1118	729	Եղեգնաձոր	360	229
Վաղարշապատ	1032	859	Վայք	858	570
Գեղարքունիք	6372	4580	Տավուշ	4579	3972
Գավառ	1032	711	Իջևան	1311	1037
Ճամբարակ	233	191	Նոյեմբերյան	619	494
Մարտունի	1339	837	Տավուշ	565	483
Սևան	2002	1728	ք. Դիլիջան	2084	1958
Վարդենիս	1766	1113			

Աշխատանքով ապահովվածներն ըստ ամիսների

ամսվա վերջի դրությամբ

	Ընդամենը, մարդ		Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %		Աշխատանք փնտրողների նկատմամբ, %	
	2011թ.	2012թ.	2011թ.	2012թ.	2011թ.	2012թ.
Հունվար	631	659	114.3	104.4	0.7	0.8
Փետրվար	824	881	83.8	106.9	0.9	1.1

Թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունն ըստ ամիսների, 2012թ.

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատուժի պահանջարկը		Զբաղվածների թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով		
	մարդ	2011թ. նույն ամսվա նկատմամբ, %	մարդ	նախորդ ամսվա նկատմամբ, %	2011թ. նույն ամսվա նկատմամբ, %
Հունվար	1293	174.3	54	90.0	50.5
Փետրվար	1539	184.8	44	81.5	46.8

Նպաստառու գործազուրկների թվաքանակը և գործազրկության նպաստի միջին չափը

ամսվա վերջի դրությամբ

	Նպաստառուների թվաքանակը, հազ. մարդ			Նպաստի միջին չափը, դրամ	
	2011թ.	2012թ.	Աճի տեմպը, %	2011թ.	2012թ.
Հունվար	18.9	14.1	74.6	17880	16500
Փետրվար	18.5	13.6	73.5	17712	16235

Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերում ընդգրկված անձանց թվաքանակն ըստ ծրագրերի տեսակների, 2012թ.

ամսվա վերջի դրությամբ

	Հունվար				Փետրվար			
	ընդամենը, մարդ	նրանցից՝			ընդամենը, մարդ	նրանցից՝		
		կա-նայք	երիտասարդներ, տարեկան			կա-նայք	երիտասարդներ, տարեկան	
		16-24	25-30		16-24	25-30		
Օրագրերում ընդգրկված անձանց թվաքանակը	14738	9681	754	2110	14203	9337	733	2076
<i>այդ թվում ըստ ծրագրերի.</i>								
մասնագիտական ուսուցում	410	298	132	101	275	224	91	65
ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար ֆինանսական աջակցություն	0	0	0	0	19	1	0	1
աշխատաշուկայում անմրցունակ խմբերին աշխատանքի տեղավորման նպատակով աշխատավարձի մասնակի փոխհատուցում	234	152	15	24	246	161	12	31
հասարակական աշխատանքներ	0	0	0	0	0	0	0	0
այլ վայր աշխատանքի գործուղում	30	15	7	5	34	16	8	6
գործազրկության նպաստ	14064	9216	600	1980	13629	8935	622	1973